ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱՖԱՐՈՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 73 - 74 (16570) ՇԱԲԱԹ, 9 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ՆԱՏՕ-Ի ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԱՐԱԳԱՅՈՒՄՆ Է»

Թբիլիսիում, սեպտեմբերի 12-13-ին, անցկացվեց Մակքեյնի ինստիտուտի նախաձեռնությամբ անցկացվող Եվրոպայի եւ Մերձավոր Արեւելքի ապագային նվիրված միջազգային խորհրդաժողով: Ելույթ ունենալով միջազգային խորհրդաժողովում՝ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին անդրադարձավ եվրոպական եւ Հյուսիսատլանտյան կառույցների Վրաստանի ինտեգրման գործընթացին, նշելով, որ այդ կառույցների ինտեգրումը երկրի առաջնահերթությունն է, թեպետ առավել նշանակալից է ինտեգրման տեմպերի արագացումը:

Նրա խոսքով, վերջին հինգ տարիներին Վրաստանը նշանակալի առաջադիմության է հասել մի շարք բնագավառներում. «Մենք իրականացրել ենք սահմանադրական փոփոխությունները, ներդրել ընտրական ժողովրդավարական օրենսդրություն: Առաջընթաց է գրանցվել նաեւ կրթության ոլորտում: Այդ ամենը միասին հիմք է ստեղծում մեր

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԱՎԵԼԻ ՄԵԾ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՆՔ ԱՐԺԱՆԻ ԱՄՆ-Ի, ՆԱՏՕ-Ի ԵՎ ԵՄ-Ի ԿՈՂՄԻՑ»

Ինչպես արդեն նշեցինք, Թբիլիսիում աշխատանք է սկսել, Մակքեյնի ինստիտուտի նախաձեռնութծամբ անցկացվող Եվրոպայի եւ Մերձավոր Արեւելքի ապագային նվիրված միջազգային խորհրդաժողովը, որի աշխատանքներին իր մասնակցությունն է ցուցաբերում նաեւ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին:

Իր ելույթում, երկրի ղեկավարն անդրադարձել է սահմանադրական փոփոխությունների շուրջ տարվող բանավեճերին, Վրաստան-Ռուսաստան հարաբերություններին, Եվրամիության հետ ստորագրած ասոցիացման համաձայնագրին, Հյուսիսատլանտյան դաշինքի հետ երկրի համագործակցությանը, ինչպես նաեւ Միացյալ Նահանգների հետ ռազմավարական համագործակցության թեմաներին:

Մասնավորապես, խոսելով սահմանադրական փոփոխությունների մասին, նախագահը

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐՆ ԷԻՆ

Սեպտեմբերի 11-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպել է աշխատանքային այցով Թբիլիսիում գտնվող Արժույթի միջազգային հիմնադրամի Մերձավոր Արեւելքի եւ Կենտրոնական Ասիայի երկրների դեպարտամենտի տնօրեն Ջիխաք Ազուրի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանում իրականացվող բարեփոխումները, երկրի մակրոտնտեսական ցուցանիշները եւ հիմնադրամի նոր ծրագրերը: Հանդիպմանը վարչապետն ընդգծեց հիմնադրամի, ինչպես ֆինանսական, այնպես էլ տեխնիկական աջակցությունը, ինչը նպաստում է երկրի տնտեսական աճին ու սոցիալական զարգացմանը: Առանձնակի ուշադրություն հատկացվեց Վրաստանի ֆինանսական քաղաքականությանը, դրամական եւ ֆինանսական ոլորտների բարեփոխումներին, ինչ-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի՝ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԸՀ ԱՎԱՐՏԵՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 12-ին, երեկոյան, Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովում, տեղի ունեցավ հոկտեմբերի 21-ին անցկացվելիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակից ընտրական սուբյեկտների վիճակահանությունը:

Ստորեւ ներկայացնում ենք մասնակից սուբյեկտներին եւ դրանց ընտրական համարները՝ ըստ ԿԸՀ կողմից նրանց գրանցման հերթականության:

«Նոր աջեր»՝ 29, «Հայրենյաց հայրենիքի զավակներ օրդեն»՝ 34, «Վրաստանի միասնության եւ զարգացման կուսակցություն»՝ 14, «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան»՝ 41, «Պետությունը՝ ժողովրդի համար շարժում»՝ 1, «Դավիթ Թարխան Մոուրավի»՝ Իրմա Ինաշվիլի-Վրաստանի հայրենասերների դաշինք»՝ 8, «Շալվա Նաթելաշվիլի-Վրաստանի լեյբորիստական կուսակցություն»՝ 10, «Ավանդապահներ»՝ 18, «Միացյալ ժողովրդավարական շարժում»՝ 4, «Հանուն Աստծու՝ Զվիադիի ուղիով»՝ 28, «Ազատություն-Զվիադ Գամսախուրդիայի ուղին» քաղաքական շարժում»՝ 31, «Ջոնդի Բաղաթուրիա-Քարթուլի դասի»՝ 13, «Սոցիալիստական Վրաստան-կոմունիստներ»՝ 37, «Արդյունաբերողներ»՝ 19, «Աշխատավորների սոցիալական կուսակցություն»՝ 15, «Վրաստան կուսակցություն»՝ 17, «Մերաբ Կոստավայի ընկերություն»՝ 22, «Հանրապետական կուսակցություն»՝ 6, «Առաջադիմական ժողովրդավարական կուսակցություն»՝ 39, «Կառույց-շարժում»՝ 20, «Ձախ դաշինք»՝՝ 9, «Նոր քրիստոնեա-ժողովրդավարներ»՝ 23, «Թամազ Մեչիաուրի-Միասնական Վրաստա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

Սեպտեմբերի 11-ին, Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն, Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի հրավերով, պաշտոնական այցով գտնվում էր Երեւանում:

Այցի շրջանակներում՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպմանը Միխեիլ Ջանելիձեն երախտագիտություն հայտնեց բարեկամ Հայաստանին՝ Բորժոմիում բռնկված անտառային խոշոր հրդեհի մարման գործում ցուցաբերած զգալի աջակցության համար:

Հանդիպմանը զրուցակիցներն անդրադարձան տարբեր ոլորտներում վրաց-հայկական փոխգործակցությանը եւ երկկողմ հարաբերությունների ամրապնդմանն ուղղված ծրագրե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ ՀՈՒԶՈՂ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Սեպտեմբերի 11-ին, պաշտոնական այցով Երեւանում գտնվող Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն հանդիպեց Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

Հանդիպմանը նախարարները գոհունակությամբ արձանագրեցին, որ, վերջին տարիներին, երկու հարեւան ու բարեկամ երկրների հարաբերությունները զգալի զարգացում են ապրում: Այս համատեքստում երկուստեք կարեւորվեց արտաքին գերատեսչությունների ներդրումը Վրաստանի ու Հայաստանի ղեկավարների միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման գործում: Այդ առումով, առանձնակի շեշտը դրվեց առեւտրա-տնտեսական հարաբերությունների հեռանկարների, այդ թվում՝ տրանսպորտային, էներգետիկայի, մշակույթի, զբոսաշրջության եւ մյուս ոլորտների վրա:

Ինչպես ընդգծվեց հանդիպ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Սիրելի դպրոցականներ, ուսանողներ, ծնողներ, մանկավարժներ, շնորհավորում ենք նոր ուսումնական տարվա մեկնարկի առիթով:

Հնչեց դպրոցական զանգը, դեպի գիտության աշխարհ դռները բացեցին Վրաստանում գործող հանրային ու մասնավոր բոլոր դպրոցները, բարձրագույն ուսումնական հաստատությունները, մասնագիտական ուսումնարանները...

2017-2018 ուսումնական տարում Վրաստանում գործող 2085 հանրային դպրոցներում ուսանելու է շուրջ 575 հազար աշակերտ, որից 56 300-ը՝ առաջին դասարանցիներ: Ինչ վերաբերում է առաջին կուրսի ուսանողներին, ապա, դրանց թիվը 28 հազար է, այդ թվում հայկական դպրոցների ավելի քան 500 շրջանավարտներ:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի նույնպես Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունն առաջին դասարանցիներից յուրաքանչյուրին նվիրեց նոութբուքեր եւ փոխանցեց անվճար դասագրքեր:

Բարի երթ գիտելիքի, իմացության կախարդական աշխարհում:

(Թեմայի շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րին՝ այդ համատեքստում քննարկելով բարձր մակարդակով ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ընթացքը:

Հայաստանի նախագահը կարեւորեց հաճախակի փոխայցելությունները, որոնք, նրա համոզմամբ, լավ հնարավորություն են՝ քննարկելու համագործակցության ընթացիկ վիճակն ու անդրադառնալու հարաբերությունների խորացման նոր հնարավորություններին:

Հանդիպմանը, երկկողմ հարաբերություններից բացի, քննարկվեցին միջազգային կառույցների շրջանակներում վրաց-հայկական փոխգործակցությանը, ինչպես նաեւ բազմակողմ ձեւաչափով հարաբերությունների զարգացմանը վերաբերող հարցեր:

Զրուցակիցները մտքեր փոխանակեցին տարածաշրջանային եւ միջազգային արդի խնդիրների ու մարտահրավերների շուրջ, անդրադարձան ԼՂ հիմնախնդրի կարգավորման գործընթացին:

ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ ՀՈՒԶՈՂ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մանը, հարաբերությունների զարգացման տեսանկյունից առանձնակի դեր է վերապահվել վրաց-հայկական բիզնես գագաթաժողովին: Հանդիպմանն ընդգծվեց նաեւ երկու երկրների երիտասարդների միջեւ ինտեգրման գործընթացը, ինչն իր արտահայտությունն է գտնել Վրաստանում եւ Հայաստանում ամառային ճամբարներում վրաց եւ հայ երիտասարդների հյուրընկալության մեջ: Անդրադարձ կատարվեց միջազգային կառույցների շրջանակներում փոխգործակցությանը, միջխորհրդարանական հարաբերություններին, առեւտրա-տնտեսական կապերին, տրանսպորտային ենթակառուցվածքներին, համագործակցությանը, էներգետիկայի, մշակույթի, զբոսաշրջության եւ այլ ոլորտներին վերաբերող հարցերին: Կարեւորվեց հայ-վրացական իրավապայմանագրային դաշտի առավել ընդլայնումը:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ վիրահայությանը հուզող խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվող քայլերին:

Վրաստանի եւ Հայաստանի արտաքին գերատեսչությունների ղեկավարները, մտքեր փոխանակեցին տարածաշրջանային ու միջազգային հրատապ մի շարք խնդիրների շուրջ:

Էդվարդ Նալբանդյանը Միխեիլ Ջանելիձեին ներկայացրեց ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացն առաջ մղելու նպատակով համապատասխան պայմանների ստեղծմանն ուղղված Հայաստանի եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների համատեղ ջանքերը:

Նշենք, որ այս տարվա հուլիսին լրացավ Վրաստանի եւ Հայաստանի նորանկախ պետությունների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակը: Անցած տարիներին տարբեր ոլորտներում ձեւակերպված սերտ համագործակցության արդյունքում, Հայաստանը բոլոր այդ տարիներին եղել է Վրաստանի արտաքին առեւտրական գործընկերների առաջին տասնյակում: Մասնավորապես, 2016 թվականին երկու երկրների միջեւ առեւտրաշրջանառությունը կազմեց շուրջ 367,4 միլիոն դոլար:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ՆԱՏՕ-Ի ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԱՐԱԳԱԾՈՒՄՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

գլխավոր առաջնահերթության իրականում արեւմտյան ժողովրդավարության արմատավորման համար: Մենք հասել ենք նշանակալի առաջընթացի: Իրականացրել մարդու իրավունքների ոլորտում փոփոխություններ, հիմնել ենք բավական կատարյալ դատական համակարգ, ապահովել տնտեսության դինամիկ աճ»,- հայտարարեց վարչապետը:

Խոսելով սահմանադրական փոփոխությունների շուրջ ստեղծված իրավիճակի մասին, վարչապետն ասաց, որ սահմանադրությունը կարող է լինել ոչ իդեալական, սակայն, չնայած ընդդիմության նկատմամբ հարգալից վերաբերմունքի, հարկ է նշել, որ յուրաքանչյուրն ունի իր օրակարգը, եւ կուսակցությունների մի մասը քննադատում է այն ամենը, ինչ իրականացնում է կառավարությունը: - Մենք ընդունեցինք որոշում՝ անցնել համամասնական համակարգի եւ դա բավական դժվար էր: Եղան սուր բանավեճեր: Օրինակ, մինչեւ սահմանադրության փոփոխումը վարչապետին փոխելը, փաստորեն. անհնարին էր: Դա արվել էր նախորդ իշխանության կողմից, քանի որ այն ժամանակվա նախագահը ցանկանում էր դառնալ վարչապետ: Մենք այդ ընթացակարգը վերացրինք,- ասաց Կվիրիկաշվիլին եւ հավելեց, որ ներկայիս իշխանությունները ձգտում են ընդունել այնպիսի փաստաթուղթ, որը հավասարակշռություն կստեղծի պետական բոլոր ինստիտուտների միջեւ:

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԱՎԵԼԻ ՄԵԾ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՆՔ ԱՐԺԱՆԻ ԱՄՆ-Ի, ՆԱՏՕ-Ի ԵՎ ԵՄ-Ի ԿՈՂՄԻՑ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նշեց, որ պետք է շարունակել քննարկումները եւ կառավարող կուսակցությանն առաջարկել փոփոխություններ՝ նրա կողմից ներկայացված փաթեթում: «Մենք սկսել ենք նոր գործընթաց, որը նախատեսում է ջանքերի գործադրում, սահմանադրության նախագծի շուրջ փոխզիջման հասնելու ուղղությամբ: Ակնհայտ է, որ սահմանադրությունն ավելին է, քան միայն մեկ կուսակցության կողմից ընդունվող փաստաթուղթը, դա փաստաթուղթ է, որի վրա հիմնվում է պետությունը, դա խաղի ընդհանուր կանոններն են: Սահմանադրությունը չի հենվելու քաղաքական մի կուսակցության հայեցակետի վրա»,- ասաց Գիորգի Մարգվելաշվիլին:

Խոսելով, Ռուսաստանի հարաբերությունների մասին, նախագահը նշեց, որ հարեւան երկրի հետ հարաբերությունները բավական բարդ են, ուստի պահանջվում է մեծ զսպվածություն: «Ռուսները ստեղծում են առասպելներ, իբր թե Վրաստանը դառնա Արեւմուտքի հատվածը, կկորցնի իր ինքնությունը եւ դա փաթաթում են ոչ միայն Վրաստանի, այլեւ՝ ողջ աշխարհի վզին»,- հայտարարեց Մարգվելաշվիլին՝ հավելելով, որ նման իրավիճակում ԱՄՆ, ՆԱՏՕ եւ Եվրամիությունը է՛լ ավելի պետք է ակտիվացնեն Վրաստանին ցուցաբերող աջակցությունը: - Գտնում եմ, որ Վրաստանն արժանի է՝ ստանալ ավելի մեծ աջակցություն ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի եւ Եվրամիության կողմից: Վրաստանը ցույց տվեց, որ ինքը հավատարիմ է Արեւմտյան արժեքներին եւ դրա համար ամեն ինչ անում է,- ասաց Գիորգի Մարգվելաշվիլին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԸՀ ԱՎԱՐՏԵՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նի համար»՝ 7, «Վրաստանի կոմունիստական կուսակցություն-ստալինականներ»՝ 12, «Ազգային ժողովրդավարական շարժում»՝ 11, «Բաքրաձե-Ուգուլավա-Եվրոպական Վրաստան» ընտրադաշինք՝ 2, «Գիորգի Վաշաձե-Նոր Վրաստան միավորում»՝ 27, «Միասնական ազգային շարժում»՝ 5, «Դմիտրի Լորթքիփանիձե-Կախա Կուկավա-ժողովրդավարական շարժում-Ազատ Վրաստան»՝ 3, «ժողովրդական միահամուռ ժողովուրդ»՝ 38, Նախաձեռնող խմբի կողմից Թբիլիսիի քաղաքապետի պաշտոնի թեկնածու առաջադրված Ալիկո Էլիսաշվիլի՝ 42:

Նշենք, որ, վերջին ընտրություններին մասնակցած քաղաքական կուսակցությունների պարագայում, ԿԸՀ ներկայացրած դիմումի հիման վրա պահպանել է այդ կուսակցությունների ընտրական համարները: Ընդհանուր առմամբ, հոկտեմբերի 21-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին կմասնակցի 24 քաղաքական կուսակցություն, 5 ընտրադաշինք եւ նախաձեռնող խմբի կողմից ներկայացված մեկ թեկնածու:

Ինչպես նշեց ԿԸՀ մամլո խոսնակ Անա Միքելաձեն, ընտրողների ցուցակում փոփոխությունների կատարումը հնարավոր է մինչեւ հոկտեմբերի 23-ը:

Տեղական ընտրությունների կապակցությամբ՝ անհրաժեշտ տեղեկություն հնարավոր է ստանալ ԿԸՀ թեժ գծով՝ 2-51-00-51, ինչպես նաեւ օնլայն օպերատորի միջոցով:



ՄԱԿ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵՑ ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 72-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Նյու Յորքում ՄԱԿ-ի կենտրոնակայանում, սեպտեմբերի 12-ին, բացվեց համաշխարհային կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հերթական 72-րդ նստաշրջանը:

Սեպտեմբերի 19-ին, Գլխավոր ասամբլեայի շրջանակներում, կսկսվեն ամենամյա ընդհանուր քաղաքական բանավեճերը: Դրանք կմեկնարկեն ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի ուղերձով, այնուհետեւ առաջին անգամ Գլխավոր ասամբլեայի ամբիոն կբարձրանա նախագահ Թրամփը, ինչպես նաեւ ելույթներ կունենան Հայաստանի, Աֆղանստանի, Բրազիլիայի, Իսրայելի, Ուզբեկստանի, Ֆրանսիայի եւ այլ երկրների ղեկավարները:

ԱՆԳԼԻԱ

ՊԱՅԹՅՈՒՆ ԼՈՆԴՈՆԻ ՄԵՏՐՈՅՈՒՄ

Սեպտեմբերի 15-ին Լոնդոնի մետրոյի «Փարսոնս գրին» կայարանում, գնացքի վագոնում տեղի ունեցավ պայթյուն, որի արդյունքում տուժել է շուրջ 20 մարդ:

Ոստիկանությունն պայթյունը որակել է որպես ահաբեկչություն:

Մեծ Բրիտանիայի վարչապետ Թերեզա Մեյը պատահարի կապակցությամբ հրավիրել է արտակարգ իրավիճակների «Կոբրա» կառավարական կոմիտեի հանդիպումը:

ՄԵՔՍԻԿԱ

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐՈՎ

Մեքսիկայում տեղի ունեցած հզոր երկրաշարժի զոհերի թիվը հասել է 90-ի:

8,2 մագնիտուդով երկրաշարժը գրանցվել է սեպտեմբերի 8-ին: Էպիկենտրոնը գտնվում էր Տրես-Պիկոս բնակավայրից 119 կիլոմետր հարավ-արեւմուտք ընկած շրջանում: Երկրաշարժի օջախը 33 կիլոմետր խորության վրա էր:

ԱՄՆ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 20 ՏՐԻԼԻՈՆԻ ՆՇԱԳԻԾԸ

ԱՄՆ-ի պետական պարտքը պատմության մեջ առաջին անգամ գերազանցել է 20 տրիլիոն դոլարի նշագիծը: Դա տեղի է ունեցել ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կողմից երկրի պետական պարտքի շեմի ժամանակավոր բարձրացման մասին օրենքի ստորագրումից հետո: Թրամփն այս քայլին է դիմել պայմանով, որ ամերիկացի խորհրդարանականները միաժամանակ ընդունեն «Հարվի» փոթորկից տուժածների ֆեդերալ ֆինանսական օգնության փաթեթը:

Ամերիկյան պարտքը այժմ կազմում է 20,16 տրիլիոն դոլար, ինչը 100 տոկոսով գերազանցում է երկրի համախառն ներքին արդյունքը: Այն հավասար է 19,3 տրիլիոն դոլարի:

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄԸ ԵՐԿԱՐԱՁԳՎՈՒՄ Է

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը, ահաբեկչական սպառնալիքի պահպանման պատճառով, սեպտեմբերի 11-ին մեկ տարով երկարաձգել է արտակարգ դրության ռեժիմը, որը երկրում սահմանվել էր 2001 թվականի սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններից հետո:

Նշենք, որ արտակարգ դրության սահմանումը նախագահին տալիս է լրացուցիչ որոշ իրավաբանական լիազորություններ, որոնցից նա կարող է օգտվել ցանկացած պահի:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԳՈՐԾԱԴԻՐ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎՐԱՍՏԱՆՆ ԱՄՈՒՐ ԴԻՐՔԵՐՈՎ ԿԱՐՈՂ Է ԴԻՄԱՎՈՐԵԼ ԾԱՆԿԱՑԱԾ ՏԱՏԱՆՈՒՄ»

Սեպտեմբերի 13-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:

Իր խոսքում, վարչապետը նշեց, որ, իրականացված բարեփոխումների արդյունքում, Վրաստանը շատ ավելի ուժեղ դիրքերով է դիմավորում բոլոր այն հնարավոր տատանումները, որոնք կարող են տեղի ունենալ տարածաշրջանում:

Արձագանքելով ինքնիշխանության վարկանիշում Moody's ընկերության կողմից Վրաստանի ցուցանիշը Ba3-ից Ba2 բարձրացնելու փաստին, վարչապետը նշեց. «Մեր նպատակն է առավել բարելավել այդ վարկանիշը, որպեսզի երկիրն անցնի ներդրման նոր փուլ, ներգրավի մասնավոր վարկեր, ինչը առավել մատչելի է ու հասանելի: Մենք հուսով ենք, որ կարեւորագույն գործակալություններից մեկի կողմից մեզ հատկացված վարկանիշը կանդրադառնա մյուս վարկանիշերի վրա: Կարեւոր է նաեւ, որ հեռանկարը գնահատվել է որպես կայուն, եւ առաջընթացը պայմանավորում են տարածաշրջանում 2014-2016 թվականներին տեղի ունեցած մարտահրավերների հաջող հաղթահարմամբ: Վարկանիշում նշված է մեր էկոնոմիկայի հզորությունը, դրական դինամիկան, մակրոտնտեսական աճող ցուցանիշները, դրամական կայուն քաղաքականությունը եւ իրականացվող ենթակառույցային նախագծերը»,- հայտարարել է վարչապետը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պես նաեւ միջազգային վարկանիշներում Վրաստանի առաջատար դիրքերին առնչվող հարցերին:

Գիորգի Կվիրիկաշվիլին հյուրին մանրամասն տեղեկատվություն ներկայացրեց կառավարության չորս կետից կազմված ծրագրի վերաբերյալ, նշեց, որ հիմնադրամի նոր ծրագրերը գլխավորապես կողմնորոշված են Վրաստանի կառավարության համար առաջնահերթային ուղղություններում: Հանդիպմանը ուշադրություն հատկացվեց նաեւ կապիտալի շուկայի բարեփոխման եւ կենսաթոշակային բարեփոխման հարցերի վրա:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՀՄՈՒՍԱՎԼՇՅՈՒՆ ՍԱՄՍԱԽՈՒՐ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ «ՍԱՐՓԻ» ԱՆՑՈՒՄԱԿԵՏՈՒՄ ԾԱԳԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սեպտեմբերի 13-ին, Վրաստանի ֆինանսների նախարարությունում, Թուրքիայի «Սարփի» անցումակետում վերջին մեկ շաբաթվա ընթացքում ծագած հիմնախնդիրների եւ արգելակումների պատճառով, Թուրքիայի տարածքում մեծ քանակությամբ տրանսպորտային միջոցների եւ ուղեւորների հերթի գոյացման հետ կապված, Վրաստանի ֆինանսների առաջին փոխնախարար, եկամուտների ծառայության պետ Գիորգի Թաբուաշվիլին հանդիպում ունեցավ Վրաստանում Թուրքիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Լեւենթ Գյումրուկչուի հետ: Հանդիպումն անցկացվեց վրացական կողմի նախաձեռնությամբ:

Թուրքիայի տարածքում մաքսատանն իրականացվող վերանորոգման աշխատանքների պատճառով, երկու երկրների միջեւ երթեւեկությունը, մաքսային ընթացակարգերը թուրքական կողմից իրականացվում են սահմանափակ աշխատակարգով: Մինչեւ ընթացիկ շինարարական աշխատանքների ավարտը, ուղեւորներին, ավտոմեքենաներին, ավտոբուսներին եւ բեռնատար մեքենաներին կսպասարկեն միայն երկու անցումակետեր: Ինչպես նշվեց հանդիպմանը, «Սարփի» անցումակետը ինչպես ուղեւորների, այնպես էլ՝ բեռների փոխադրման տեսանկյունից, ամենածանրաբեռնված կետերից մեկն է: Հետեւաբար, երկու երկրների համար արտակարգ նշանակալից է՝ նվազագույնի հասցնել ռազմավարական նշանակություն ունեցող անցումակետի հիմնախնդիրներն ու արգելքները: Ինչպես նշվեց հանդիպմանը, առաջիկա օրերի ընթացքում կանցկացվի վրաց-թուրքական սահմանագծում Վրաստանի եւ Թուրքիայի մաքսային ծառայությունների հանդիպումը: Միաժամանակ, ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության «Սարփի» մաքսակետը գործում է առանց սահմանափակումների՝ շուրջօրյա աշխատակարգով: Յուրաքանչյուր անձ, ով ցանկանում է մանրամասն տեղեկություն ստանալ «Սարփի» անցակետում ստեղծված իրավիճակի մասին, կարող է այցելել (http://www.rs.ge/6183) կայքը:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

PSP №1 ԳՆԱՀԱՏՈՒՄ

PSP ԱՐԺԱՆԱՑԱՎ ԱՄԵՆԱՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ «ՍԹԻՎԻ ԵՎՈՐԴԵՍ» ԲԻԶՆԵՍ ՄՐՑԱՆԱԿԻ

Վրացական PSP ընկերությունը հաղթող ճանաչվեց «Սթիվի Եվորդես» բիզնես-պարգեւատրման «Տարվա լավագույն ռեբրենդինգ» անվանակարգում:

Ինչպես նշեց PSP խմբի գլխավոր տնօրեն Գոչա Գոգիաշվիլին, վերոնշյալ պարգեւին նախկինում արժանացել են այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են «Էֆլին», «Սամսունգը», «Ֆորդը» եւ այլն:

- Ուրախ ենք, որ PSP-ն միջազգային ասպարեզում ներկայացրեց Վրաստանը: Անցյալ տարի տեղի ունեցավ առաջին դեղատան ռեբրեդինգը: Ներկայում նման դեղատների թիվը հասել է 60-ի,- հայտարարեց Գոգիաշվիլին:

PSP ընկերությունը 23 տարեկան է եւ ժամանակահատվածում մշտապես հոգում է բնակչության առողջապահության եւ սպասարկման ուղղությամբ: Բիզնեսի զարգացմանը զուգընթաց, աճում են սպասարկումների պահանջները, եւ ընկերությունը որոշեց նորացնել դեղատների գործառույթները:

- Ռեբրեդինգի համար հայտարարված միջազգային մրցույթում հաղթանակած ընկերության հետ միասին հիմնեցինք նոր հիմնադրույթ, որն անվանեցինք՝ «Ավելին, քան դեղատունը»,- ասաց Գոչա Գիգիաշվիլին եւ հավելեց, որ անցյալ տարի ստեղծած առաջին դեղատուն-ռեբրեդինգը մեծ ընդունելության արժանացավ սպառողների կողմից:

Իր հերթին, PSP մարկետինգի տնօրեն Թոռնիկե Գուրուլին ընդգծեց, որ այս տարի մրցանակաբաշխությանը մասնակցում էին 60 երկրների 4 հազար ընկերությունների ներկայացուցիչներ, որոնց գործունեությունը 200-ից բաղկացած ժյուրին գնահատում էր՝ ելնելով տարբեր չափորոշիչներից:

- Դա աշխարհում ամենամեծ ու հեղինակավոր բիզնես-պարգեւատրումն է: Այն մեկնարկել է դեռեւս 2002 թվականին: Ինչպես պարզվեց, մենք լավագույններից մեկն էինք այդ ընկերությունների թվում, որոնց շարքում քիչ չէին արծաթե գրան-պրիին արժանացածները,- նշեց Թոռնիկե Գուրուլին՝ հավելելով, որ պարգեւատրման գլխավոր արարողությունը հոկտեմբերի 21-ին կանցկացվի Բարսելոնայում, որտեղ էլ ընկերությանը պաշտոնապես կփոխանցվի մրցանակ:



ՎՐԱՍՏԱՆԻ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԲՈՐԴՈՅՈՒՄ

Սեպտեմբերի 15-ին, ֆրանսիական Բորդո քաղաքում համաշխարհային գինեգործության Cite des Civilisations Du Vin կենտրոնում բացվեց Վրաստանի գինեգործության պատմությանը նվիրված ցուցահանդես:

«Վրաստանը՝ գինեգործության օրրան» ցուցահանդեսը հանդիսավոր պայմաններում բացեցին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին եւ Բորդոյի քաղաքապետ Ալեն Ժուպեն: Ներկայացված ցուցանմուշներն արտացոլում են Վրաստանի ազգային թանգարանի կողմից նախապատրաստած վրաց գինեգործության ութ հազարամյա պատմությունը:

Ցուցահանդեսի շրջանակներում ծրագրված են տարբեր միջոցառումներ՝ գիտաժողովներ, շնորհանդեսներ, գինու արհեստավարժ համտեսում, ինչպես նաեւ՝ մշակութային եւ թմատիկ միջոցառումներ ու հանդիպումներ:

Բորդոյում «Վրաստանը՝ գինեգործության օրրան» ցուցահանդեսը կշարունակվի մինչեւ նոյեմբերի 5-ը:

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ՝ UNWTO ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Իսպանիայում Վրաստանի նախկին դեսպան Զուրաբ Պոլոլիկաշվիլին հաստատվել է ՄԱԿ-ին առընթեր զբոսաշրջության միջազգային կազմակերպության (UNWTO) գլխավոր քարտուղարի պաշտոնում:

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ԱԳ նախարարությունը, չինական Չենդու քաղաքում անցկացված UNWTO 22-րդ նստաշրջանը միաձայն պաշտպանեց այդ պաշտոնում Զ.Պոլոլիկաշվիլու ընտրության մասին կազմակերպության գործադիր խորհրդի որոշումը:

Դա առաջին դեպքն է, երբ Վրաստանի ներկայացուցիչը ՄԱԿ համակարգում նման բարձր պաշտոն է զբաղեցնում: Այդ պաշտոնում Զ.Պոլոլիկաշվիլին կաշխատի մինչեւ 2021 թվականը:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(15 սեպտեմբերի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.435	2.495
ԵՎՐՈ	2.879	3.007
ՌՈՒԲԼԻ	0.040	0.046
ԴՐԱՄ	0.0039	0.0056

Սեպտեմբերի 8-ի համեմատ, դոլարի կուրսը աճել է 0,01 լարիով:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱՌԱՋԻՆ ՕՐԸ ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Սեպտեմբերի 15-ին ուսումնական նոր տարին ազդարարող դպրոցական զանգը հնչեց նաեւ թբիլիսյան երկու հայկական դպրոցներում:

Մայրաքաղաքի թիվ 104 հանրային դպրոցում օրն իրավամբ տարբերվեց վերջին առնվազն երկու տասնամյակում բացվող մյուսներից: Հուզառատ էր, որովհետեւ դպրոցն իր գիրկն էր առնում 32 առաջին դասարանցու, հետեւաբար բացում երկու առաջին դասարան: Ըստ որում, դասարաններից մեկը իր երթը սկսեց նոր ու երիտասարդ ուսուցչուհու դասղեկությամբ:

Հանդիսավոր տողանին բացվեց դպրոցական հիմնի հնչեցմամբ եւ, ապա տնօրեն Իրինա Ժամկոչյանի՝ աշակերտությանը, մանկավարժներին եւ ծնողներին ուղղված ողջույնի խոսքով: Նրա խոսքն ուրախ, միաժամանակ փոքր-ինչ թախծոտ էր: Ուրախ էր, քանի որ բացվում էր երկու առաջին դասարան, նախորդ ուսումնական տարվա 16 շրջանավարտներից երեքը ոսկե մեդալով ավարտել էին դպրոցը, իսկ տասն՝ ընդունվել Թբիլիսիի եւ Երեւանի բարձրագույն ուսումնական հաստատություններ, եւ վերջապես դպրոցում այսուհետ ուսանելու է 300-ից ավելի աշակերտ, մինչդեռ նախորդ տարի թիվը չէր գերազանցում այդ ցուցանիշը: Տխուր էր, որովհետեւ օգոստոսի առաջին օրերին դպրոցը ողբերգորեն կորցրել էր իր 10-րդ դասարանի սան Ռոմա Սարգսյանին, ում ընտանիքին տնօրենը եւս մեկ անգամ հայտնեց կրթօջախի ողջ անձնակազմի վշտակցությունը:

Թբիլիսիի թիվ 104 դպրոց

Աստծու պատվիրաններին հավատարիմ եւ դպրոցում միայն ուսման մասին մտածելու պատգամով էր լի Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու լուսարարապետ Տ.Մանուկ քահանա Զեյնալյանի օրհնության խոսքը: Սաներին եւ մանկավարժներին շնորհավորական խոսքով դիմեցին արարողությանը ներկա Վրաստանում Հայաստանի դեսպանության առաջին քարտուղար Արթուր Սարգսյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, վաստակաշատ մանկավարժ Նորայր Բաղդասարյանը, Վրացահայերի միության ներկայացուցիչ Մարի Առաքելովան եւ «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի ղեկավար Լեւոն Չիդիլյանը, ով այս անգամ, ի դեպ, հանդես էր գալիս նաեւ ծնողի դերում՝ դպրոց բերելով իր առաջնեկին՝ Անի Չիդիլյանին:

Ինչ վերաբերում է տարվա նորամուծությանը, ապա, այսուհետ դպրոցում կգործի բուժկետ: Բացի այդ, նշենք, որ դպրոցական բյուջեի հաշվին վերանորոգվել է դպրոցի ութ դասասենյակ, որից մեկը վերածվել՝ լաբորատորիայի: Նախորդ տարիների նման, այս տարի նույնպես առաջին դասարանցիներին բաժանվեցին նոութբուքեր եւ անվճար դասագրքեր:

Տասն առաջին դասարանցիներին նույն նվերը մատուցվեց նաեւ Թբիլիսիի թիվ 103 հանրային դպրոցում: Տնօրեն Արչիլ Չխաիձեի ողջույնով բացվող ուսումնական տարվա հանդիսավոր արարողությանը ներկա գտնվեցին եւ շնորհավորական իրենց խոսքը հղեցին Վրաստանի խորհրդարանի Իսանիից մեծամասնական պատգամավոր Դավիթ Ճիճինաձեն, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության փորձագետ Կարինե Մանուկյանը, Վիրահայոց թեմի կրթության բաժնի ղեկավար Եվգինե Մարկոսյանը, Վրացահայերի միության ներկայացուցիչ Մարի Առաքելովան, ով առաջին դասարանցիների համար հատուկ նվերներ էր բերել:

Թբիլիսիի թիվ 103 դպրոց

Նշենք, որ վրաց-հայկական այս դպրոցի հայկական բաժնում 2017-2018 ուստարում սովորելու է 110 աշակերտ: Կրթության համակարգը բիլինգվալ է, այսինքն՝ պատմություն, աշխարհագրություն, կենսաբանություն, ֆիզիկա առարկաները դասավանդվում են վրաց լեզվով: Դպրոցում բացակայում են 4-րդ, 6-րդ եւ 12-րդ դասարանները: Մինչդեռ, անցյալ տարի թիվ 103-ն ավարտեց 14 շրջանավարտ, որից մեկը՝ ոսկե մեդալակիր, երեքն արդեն իսկ վրացական բուհերի ուսանող:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԵՑ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՎ

Այսօր Վրաստանի տարածքում գործող ներկայիս թվով 130 հայկական հանրային դպրոցներում ուսուցանվող մայրենի՝ հայոց լեզու եւ գրականություն առարկան դասավանդվում է Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության կողմից հաստատված ծրագրերով եւ դասագրքերով:

Ձեռնարկները մեր դպրոցներին տարիներ շարունակ անվճար առաքում էր նշյալ նախարարության սփյուռքի հետ կապերի բաժինը: Վերջին տարիներին Հայաստանի կառավարության որոշմամբ՝ գործընթացն իրականացնում է Հայաստանի Սփյուռքի նախարարությունը:

Վրաստանի կրթության եւ գիտության ու Հայաստանի Սփյուռքի նախարարությունների միջեւ համագործակցությամբ՝ կազմակերպվեց 2017-2018 ուսումնական տարվա համար մայրենի լեզվի դասագրքերով ապահովելու գործընթացը: Սփյուռքի նախարարությունը ի մի բերեց դպրոցների համար դասագրքերի անհրաժեշտ քանակության ցանկը, միեւնույն ժամանակ, կրթօջախները հնարավորություն ունեցան Հայաստանում գործարկվող տարբեր հեղինակների կողմից ստեղծված ձեռնարկներից ընտրություն կատարել: Ցանկը հետեւյալն է եւ ընդգրկում է առաջինից իններորդ դասարանները. Այբբենարան (հեղինակներ՝ Անժելա Քյուրքչյան, Լիլիթ Տեր-Գրիգորյան), Մայրենի 1 (Անժելա Քյուրքչյան, Լիլիթ Տեր-Գրիգորյան), Մայրենի 2 (Անժելա Քյուրքչյան, Լիլիթ Տեր-Գրիգորյան), Մայրենի 3 (Անժելա Քյուրքչյան, Լիլիթ Տեր-Գրիգորյան), Մայրենի 4 (Անժելա Քյուրքչյան, Նարինե Հեքեքյան), Մայրենի 5 (Դավիթ Գյուրջինյան, Թամարա Ալեքսանյան), Մայրենի 6 (Դավիթ Գյուրջինյան, Թամարա Ալեքսանյան), Հայոց լեզու 7 (Հովհաննես Բարսեղյան), Գրականություն 7 (Դավիթ Գասպարյան), Հայոց լեզու 8 (Հովհաննես Բարսեղյան), Գրականություն 8 (Դավիթ Գասպարյան), Հայոց լեզու 9 (Հովհաննես Բարսեղյան):

Նշյալ ձեռնարկներն այժմ Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունում են եւ սկսվել է դրանց հանձնումը երկրի հայկական դպրոցներին:

Մեր ընթերցողին հիշեցնենք, որ Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը ծրագրում է մոտ ապագայում ստեղծել «Հայոց լեզվի» եւ «Հայ գրականություն» առարկաների չափորոշիչներ ու ծրագրեր եւ դրանց հիման վրա դասագրքեր:

Կարինե Մանուկյան
Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու դպրոցներում ուսումնական նյութերի ներդրման փորձագետ

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԲՈԼՈՐԻՍ ՏՈՆՆ Է

Սեպտեմբերի 15-ին, Դամալա գյուղի հանրային դպրոցը կրկին բացեց իր դռները եւ ընդունեց իր սաներին, մասնավորապես՝ 19 առաջին դասարանցիներին:

Դեպի գիտելիքի աշխարհ մուտքն ազդարարող այս օրը բոլորիս տոնն է: Գրքի ու գիտելիքի հանդեպ խոր հարգանքն ու կրթություն ստանալու ձգտումը մարդու բնորոշ կողմերից մեկն է: Մենք համոզված ենք , որ գիտելիքը հզոր ուժ է, որը միշտ էլ օգնում է ավելի ճիշտ ապրել՝ հարստացնելով մարդու միտքն ու հոգին:

Դամալայի հանրային դպրոցի աշակերտները միշտ էլ աչքի են ընկել իրենց գրագիտությամբ, կրթվածությամբ, փայլուն մտքով եւ նորանոր գաղափարներով: Այս տարվա շրջանավարտներից Կարեն Քերոբյանը, Մարինե Սաղաթելյանը, իրենց բարձր առաջադիմության համար, արժանացել են ոսկե, իսկ Սյուզաննա Փրթավյանը, Վահագն Սաղաթելյանը, Վալյա Պետրոսյանը՝ արծաթե մեդալի: Այս տարվա 23 շրջանավարտներից 8-ն ընդունվել են Վրաստանի տարբեր բուհեր, ընդ որում՝ 7-ն՝ անվճար, իսկ 4 շրջանավարտ՝ Հայաստանի տարբեր բուհեր:

Դամալայի հանրային դպրոցի համար այս ուսումնական տարին հաղթանակներով էր պսակված նաեւ շատ աշակերտների եւ ուսուցիչների համար, ովքեր մասնակցել են տարբեր տեսակի մրցույթների եւ նախգծերի, շահել են մրցանակներ ու արժանացել են պարգեւատրումների:

Մեր դպրոցում միշտ էլ կպահպանվի սովորողների՝ ուսման հանդեպ ունեցած սերն ու խանդավառությունը:

Ի սրտե շնորհավորում եմ բոլոր ուսուցիչներին, դպրոցականներին, նրանց ծնողներին, առաջին անգամ դպրոց ոտք դրած մեր աշակերտներին եւ ցանկանում, որ գիտելիք ստանալու խանդավառությունն ու բարձր տրամադրությունը նրանց ուղեկցի ուսումնառության բոլոր տարիներին:

Նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ ուզում եմ շնորհավորել նաեւ «Վրաստան» թերթի անձնակազմին՝ մաղթելով նրանց ստեղծագործական ներուժ ու եռանդ: Եվ շնորհակալություն հայտնել, որ մեզ, ուսուցիչներիս, շատ են օգնում թերթում զետեղված նյութերը՝ նվիցված դպրոցին, այն կարեւոր որոշումներին, որոնք ընդունվում են Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունում:

Նելլի Դուդուկչյան
Ասպինձայի մունիցիպալիտետի Դամալայի հանրային դպրոցի տնօրեն

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

- Սիրելի աշակերտներ, ուսուցիչներ եւ ծնողներ, ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս նոր՝ 2017-2018 ուսումնական տարին: Աղքյորփի գյուղի հանրային դպրոցի ղեկավարության եւ մանկավարժական կազմի անունից շնորհավորում եմ ուսումնական ոլորտի բոլոր նվիրյալներին: Թող որ նոր ուսումնական տարին արդյունավետ լինի, առողջաբեր եւ ապահովի ուսմնառությանն անհրաժեշտ բարեկեցիկ պայմանները:

Չնայած նրա, որ դպրոցը բավական հին է եւ վերանորոգման խիստ կարիք ունի, այնուամենայնիվ, կրթության մակարդակը բնավ չի զիջում իր դիրքերը եւ շարունակում մանկավարժներիս ամենակարեւոր առաքելությունը մնալ: Դրա վառ ապացույցն են մեր շրջանավարտների բարձր ցուցանիշները: Նրանց թիվը հինգն է: Քիչ են, բայց բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվեցին հինգն էլ:

Եվ վերջապես, հուրախություն բոլորիս, ասեմ, որ այսօր Աղքյորփիի հանրային դպրոցն իր գիրկն առավ եւ դպրոցի դռները լայն բացեց 14 փոքրիկների՝ առաջին դասարանցիների համար: Սա մեծ տոն է ոչ միայն դպրոցի, համայն գյուղի, այլեւ, կարծում եմ, Վրաստանի բոլոր հայերիս համար:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ բոլորիս նոր ուսումնական տարին:

Վիոլետա Սուքիասյան
Մառնեուլիի մունիցիպալիտետի Աղքյորփիի հանրային դպրոցի փոխտնօրեն